

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՔՆՆԱԳՐԱԽՈՒՅՈՒՆ

ՇՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ ՏԱՂԵՐ

(Աշխատասիրություն իմ. Գրվազյանի, Երևան, 1960)

Միջնադարյան հայ ազգաբանեկան հանդիպում են միեկնույն սկիզբն ունեցող երկու տաղ՝ «Այսօր եղե պայծառ զարուհ» և «Ահա եղե պայծառ զարուհ»։ Առաջին հայացքից թվում է՝ միեկնույն սահմանափակություններն են։ Իրականում, սակայն, դրանք բնական են հայ բերթության զարգացման անցած ուղու աարբեր եզրագծերում։ Մեկի հեղինակն է սիրո այլարանական գովքն անող հոստանդին Երզնկացին, մյուսը՝ բացահայտ սիրերգու Հովհաննես Թլկուրանցին է։

Հոստանդին Երզնկացին երգում է սերը, բայց երկնում է ազատ խոսել, իր ձայնը տալիս է բլրուրին։

Սէր է ծառն ու ոէր ծաղիկն,
Ու սէր հաւուն ձայնն ի ծառին,
Սէր է վարդն ու սէր բլրուրն,
Սիրով նրստել ի վերայ վարդին...

Իսկ Թլկուրանցին ոչ միայն չի երկնում, այլև՝ խիստ համարձակ է, երգում է կնոջ ծոցը՝

Մոցդ է դրախտ անմահութեան,
Անմահական պտղով դրախտ,
Դու օրինակ եռ աղեկնուն,
Զբեղ սիրէ աստուած և մարդ։

Այսպիսով Հովհաննես Թլկուրանցու սահմանափակությունը նորություն է մտնում միջնադարյան բանաստեղծության մեջ և մի զգալի չափով առաջ է մղում այն։

Այս հետադարձի բանաստեղծի գրական ժառանգության ուղղութիւնայինն ու հրատարակությանն է իր աշխատանքը նվիրել բանասիրական գիտությունների թեկնածու իմ. Գրվազյանը։

Նրա կազմած ժողովածուում առաջին անգամ ի մի են բերված Հովհաննես Թլկուրանցու զանազան ձեռագրերում, զրբերում և պարբերականներում ցրված 24 տաղ, որոնց բնական բնագրերը կազմելը պահանջել է բանասիրական փորձ և մանրակրկիտ աշխատանք։

Թլկուրանցու տաղերը ձեռագրերում խիստ ազավազված են՝ բրա րինակներից է «Տաղ զարնան» (չջ 164-169) բանաստեղծությունը։ Գոյություն ունի այս տաղի երեք տարբերակ. մեկը տպագրված է 1813 թ. տաղարանում, մյուսը՝ Մատենադարանի գիտնյութերի N 1 ժողովածուում, երրորդը գտնում ենք Մատենադարանի N 1990 ձեռագրում։

Երեք տարբերակն էլ պակասավոր են։ Տողերի ետեառաջության պատճառով բնագրերում տրամաբանական հաջորդականություն չկա։ Գրվազյանին հաջողվել է վերադասավորել բնագրերը և տարբերակների փոխադարձաբար լրացումով հիմնականում վերականգնել տաղը։ Սրանով հանդերձ պետք է նշել, որ աշխատանքը կարող էր ավելի շահել։

Այս տաղարանը ժողովածուում ներկայացված է որպես ձեռագիր, որի հետևանքով ծագել են այսպիսի անճշտություններ. «Ահա եղե պայծառ զարուհ»։ Առաջին անգամ հրատարակել է Տեղանցը, կամ՝ Քանի գատիս ի հեռ մեղաց։ Առաջին անգամ տպագրված է Սրվանձադյանի Մանանայում։ Այս երկու տաղն էլ առաջին անգամ տպված են 1813 թ. տաղարանում։

եթե բնագրի վերականգնման գործում մանրալուսանկարչության միջոցով ներգրավվելն նաև տալիս պարունակող այլ ձեռագրեր, որոնք զանվում են արտասահմանում, մասնավորապես Վիեննայում (ձ. № 343 և 344):

Նույնը կարելի է ասել նաև ժողովածուում զետեղված մյուս աղբյուրի մասին, որոնք նույնպես պահանջ ունեն Մատենադարանից գուրու գտնվող ձեռագրերի մասնակցությամբ:

Բնագրերի վերականգնման հաջողված օրինակներից են նաև «Տեսայ պատկերք մի զեղեցիկ», «Արևմտյան շողող կտան», «Հազար ուսուֆ և թեղ ծառայ» «Հանցկուն այլ ո՞վ տեսեր զմրութ», «Լոյս երեսացող եմ յո փափաք» և այլ տաղերի բնագրերի վերականգնումը: Սրանցից մանավանդ վերջին երկուսը մեղ հասել են խիստ խանգարված ձևով: Զեռագրերում բնագրերից վերջինի վերականգնումը ինչպես նաև իրար բաժանվել են իրար, մերթ տպագրվելով որպես մեկ բնագրանուր տաղ, մերթ՝ որպես միևնույն տաղերի երկու տարբերակներ: Ըմ. Պիվազյանը ձեռագրական տվյալների հիման վրա փորձել է վերականգնել տաղերի նախնական տեսքը:

Պատճառ ուշագրություն դարձրել է կատարված 1313 թ. տաղարանում տպված սակեղծագործությունների և թվերանցում այլ տաղերի համեմատական բնութագրեր, որը հնարավորություն է բնական պարզելու հովհաննես թվերանցում ժամանակի հարցը և ավելի հիմնավորելու բանասերների հայտնած կարծիքն այն մասին, որ հովհ. թվերանցի տաղերգուն և նույնանուն կաթողիկոսը տարբեր անձնավորություններ են:

Միևնույն՝ «Ուսումնասիրություններ» բաժնում աշխատասիրողը ցույց է տվել, որ թվերանցին ասացող-երգիչ է, երաժիշտ բանաստեղծ, ինչպես որ էր Ներսես Շնորհալին:

Ուսումնասիրությունը պարզություն է մտցնում նաև թվերանցում գրական ժառանգության շուրջ ստեղծված զանազան կարծիքների, թվերանցուն վերագրված կամ թվերանցումը հեռացած տաղերի և այլ հարցերի շուրջ:

Ուշագրավ է ուսումնասիրողի ենթադրությունը, թե միջնադարում գոյություն է ունեցել մի ժողովածու, որը, ըստ երևույթին, թվերանցին ինքն է կաղմել՝ տաղերի համապատասխան զասավորությամբ: Այս կարգը վերստին կյանքի կոչելու նպատակով էմանուել Պիվազյանը ժողովածուում աղբյուր զասավորել է նույն կերպ:

«Ուսումնասիրություն» մասում բնութագրվում են նաև թվերանցում ստեղծագործությունների տաղաչափությունը, լեզուն, և, ինչպես գրքի ամփոփագիրն է նշում, զրականադիտական ու բանասիրական վերլուծման են ենթարկվում թվերանցում երկերը, պարզաբանվում են տաղերգունի տեղն ու գերը միջնադարյան հայ գրականության զարգացման մեջ:

Իրավագիտորեն նշվում է, որ թվերանցին «միջնադարյան տաղերգուների մեջ վիպական տաղերի ոչ միայն առաջին, այլև առաջիկա մեղ հայտնի միայն հեղինակն» է՝ Այս իրողությունն ապացուցելու համար ժողովածուում զետեղված է «Պատմություն Երեմիայի» ժողովրդական զրույցը և ցույց է տրված նրա կապը թվերանցում համապատասխան տաղի հետ:

Բնագրերն ունեն հավելված, որի միջոցով գտնված է մատուցման մի հաջող ձև՝ թվերանցուն վերագրվող աղբյուր ներկայացնելու համար:

Գրքի վերջում կա ծանոթագրությունների և բանասիրական գիտությունների բաժին, որտեղ տրվում են կարևոր տեղեկություններ տաղերի բնագրերի և նրանց հետ կապված զանազան բանասիրական հարցերի շուրջ:

Այստեղ, ի միջի այլոց, պատահում են այլևայլ մանուր-գյուտեր, ինչպիսին է, որինակ, «Մեղ հողերը խրատ մի տամ» սուգի որոշ մանրամասները հիշեցնող տեղերի հայտնաբերումը միջնադարյան թաղիկներից մեկում:

Բնենք ժողովածուում թվերանցում անունով հրատարակված մի ստեղծագործության իրական հեղինակի ինքնությունը հարցը:

Նկատի ունենալով «Տաղ Բաթի Լիպարուին» բանաստեղծության առաջին մասը՝ 1-40 տողերը Այս մասը ոչ մի ձեռագրում թվերանցում անունը չի կրում և ժողովածուում զետեղված է թյուրիմացաբար ծագած մի ծանոթագրության հիման վրա՝ Դա Այլիշանի:

Հավանաբար, նաև այս կարծիքն ավելի ակնհայտ դարձնելու համար ժողովածուում բերված են տաղերի՝ ձեռագրերում եղած զասավորությունը պատկերող զանկեր, որոնց ծավալուն (11 էջ) հենքի վրա խիստ ցայտուն է երևում ժողովածուում տեղ գտած տաղերի ցանկի բացակայությունը զրքի վերջում:

Հովհ. թվեր., էջ 71:

ձանթադրությունն է. «Երբդոյս հեղինակն է աշխոյժ երգիչն Բովհաննէս Թվկուրանցի՞», սրից հետագայում հրաժարվել է ինքը՝ Լևիշյանը:

Վերջինս, ինչ որ թյուրիմացությամբ (հավանաբար կողմնակի աղբյուրներից իմանալով, որ Թվկուրանցին Լիպարիտին նվիրած տաղ ունի, բայց ծանոթ չլինելով այդ տաղի բնագրին), ձեռագրերում հանգիպում է Լիպարիտին փառաբանող մի ոտանավորի և այն հրատարակում «Բուշիկը»-ում⁵ Թվկուրանցու անվամբ: Հետագայում, 13 տարի հետո, գանելով իրական Թվկուրանցու տաղը, Լևիշյանը որոշում է նորից հրատարակել այն, որպեսզի այս անգամ հայտնի, որ Թվկուրանցունը չէ՝ «որտաղին ևս ունի զԹվկուրանցունը»⁶ ևն բանք այլոյ տնծանոթ և ուսկարան բերողդի՞:

Այս ուղղումից հետո տաղը Թվկուրանցու անվամբ հրատարակելու համար այլևս ոչ մի հիմք չի մնում և Պիվադյանի բացատրությունները մեզ չեն կարող համոզել նա որպես փաստ մատնացույց է անում տաղերի միասին լինելու հանգամանքը, նկատի չունենալով, որ միասին բնագրից առկա լինել կարող էին նաև տարբեր տաղեր: Բուրդուկին էլ անսպասելի չէր լինի, եթե իրար միացած լինեին Լիպարիտին նվիրված երկու տաղ. թեկուզ և՛ տարբեր հեղինակների՝ ժիշտ այդպես իրար են միացել Մատենադարանի № 518 ձեռագրում Լիպարիտի տաղն ու արձակ գրույցը, այսինքն՝ չափածոն ու արձակը, մի բան, որ ավելի անսպասելի պետք է լիներ:

Նույնիսկ այն մամանակ, երբ Լևիշյանը տաղը տպագրել է Թվկուրանցու երեք տնծարի հետ միասին, զարձյալ կասկածել է նրանց ծագման վրա: Այսպես, նա գրում է. «Վերջին երեք տան շենքն կամ ոճն տարբեր է առաջիններեն»⁷, «Վերջին տունքն հավելված թվին և պակաս շնորհրդի»⁸, «Կերեթի թե երգիչն զեռ կու շարունակէր. մենք այսպիսի գտանո՞ք և այլն»:

Պիվադյանը, նույնպես, տաղը Թվկուրանցու անվամբ հրատարակելով չանդերձ, չի առարկել նրա և իրական Թվկուրանցու տաղի կառուցվածքային և ոճական տարբերությունները՝ «Այդպիսի տարբերությունն մասամբ, իհարկե կա, գրում է նա. Մեր կարծիքով այդ տարբերությունը պայմանավորված է ամբողջ տաղի երկու մասից կազմված լինելով՝ առաջինը (1-48 տողերը) նախերգանքն է, քնարական զոփը, իսկ երկրորդը (49-ից մինչև վերջ)՝ պատմությունը... Ուշագիտ բնթերցողը կարգալով երկրորդ մասը՝ կնկատի էլ, որ նա սկզբից թերի է»⁹:

Նախ առենք, որ նման կառուցվածք ունեցող «քնարական և պատմական» մասերից բաղկացած ոտանավորները այնքան էլ սովոր չեն միջնադարյան հայ տաղերգությանը, և ապա՝ ուշագիտ բնթերցողը կնկատի ճիշտ հակառակը. այսինքն՝ կտեսնի, որ երկրորդ ոտանավորը ոչ միայն սկզբից թերի չէ, այլ հենց նոր է սկսվում և ունի նույն սկզբող ոտանավորի թուր տվյալները:

Իհարկե այդ սկզբի երկու տողը, որոնք մոզմածուում հրատարակված են որպես նախորդ ոտանավորի շարունակական տողեր.

Է առտուծոյ անունն օրհնեալ,

Որ անբեկիգրն և անփախճան...

Սրանք ոչ միայն Թվկուրանցու, այլև միջնադարյան շատ բանաստեղծների տաղերի համար բնորոշ են հենց որպես ոտանավորն սկսող տողեր: Այդպես են սկսվում Թվկուրանցու մի բանի այլ տաղեր, ինչպես. օրինակ. ԺԾ, ԺԶ, Ի և այլ տաղեր:

Ընդ որում նույնպիսի որոշակիություններ երևում է նաև նախորդ տաղի վերջը: Ինչպես որ Թվկուրանցին և միջնադարյան մյուս բանաստեղծները սովորություն ունեն վերջին տան մեջ իրենց տնունը նշելու, այնպես էլ այս տաղի հեղինակը վերջին տան մեջ գրում է.

⁴ Դ. Լևիշյան, Բուշիկը հայրենեաց հայաց, հտ. Բ. Վենետիկ, 1870, էջ 510:

⁵ Նույն տեղում:

⁶ Դ. Լևիշյան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 226:

⁷ Բուշիկը, էջ 512:

⁸ Դ. Լևիշյան, Հայապատում, Վենետիկ, 1901, հ. Բ. էջ 341:

⁹ Բուշիկը, էջ 512:

¹⁰ Հով. Թվկ., էջ 267:

Հիւսիսային կողմն (ձեռագրում՝ հողմն)¹¹ հիմիկ
Սարգրս յիշող եղաւ թեղիկ,
Դուռն սիւն էիր հայոց՝ մեղիկ.
Ով մեծ հողր քաջ Լիպարիտ...

Այս տողերից առաջ Սարգիսը հայտնում է, որ քաջ Լիպարիտի մահը սպացել են նրա ժամանակակիցները. ամրողջ «Ս. ա երկիրը», կաթողիկոսներն ու վարդապետները, քահանաները, իսկ այժմ էլ «հյուսիսային կողմում» սղում է ինքը՝

Հիւսիսային կողմն հիմիկ
Սարգիս յիշող եղաւ թեղիկ...

Ն. Ակինյանը կարծիք է հայտնում, որ այս Սարգիսը՝ Սարգիս վարդապետ Կաֆայեցին է։ Եթե այդպես է՝ մեր սրբադրությունն այլևս անկասկած է դառնում, որովհետև Կաֆայեցու ապրած վայրը՝ Դրիմը հայ մատենագրության մեջ իրոք կոչվում էր «հիւսիսային կողմն», այսինքամ հիւսիսայ. որ կոչի Դրիմն¹² և այլն։

Այնչա՛նը Սարգիս անունը նույնացնելով սուրբ Սարգսի հետ, գրում է. «Էդու. հիշի (Թվուրանցին — Կ. Ա.) Ս. Սարգսի համար շարականին րսածն. «Ա. Լ. տավոր՝ հայոց մեծաց՝ գիմեայ ի մէջ երկրի ի հիւսիսոյ, հողմն հարաւոյն»¹³, Այս կարծիքին հետևում է նաև Էմ. Պիվարյանը։ Սակայն մենք թիշ հնարավոր ենք համարում, թե որևէ միջնադարյան բանաստեղծ սուրբ Սարգսին դիմեր առանց «սուրբ» բառն ոգտադործելու։ Հնարավոր չէ նաև, որ սուրբ Սարգիսը տաղում հիշատակվեր ավելի ուշ, քան Լիպարիտին հիշող վարդապետներն ու քահանաները, ինչպես որ է քննադրում։ Այնուհետև, քննադիրն ուշագիւր քննելիս երևում է, որ ս. Սարգսին այստեղ հիշելու առիթ չկաւ նվ վերջապես, շարականում ասվում է «հողմն հարաւոյն» (ե ոչ՝ «հիւսիսոյն»)։

Կարելի է չկասկածել, որ եթե տաղի հեղինակն իրոք կամենար հիշել ս. Սարգսին ոչինչ չէր խանգարի նրան իր կամքը կատարելու։ Նա ուղղակի կգրեր.

Հիւսիսային կողմն հիմիկ
Ուրե՛ք Սարգիս է յիշող թեղիկ...

Ուրեմն տաղաչափական կանոնները չէին խանգարի բանաստեղծին՝ սուրբ քառուրդործանելու։

Այսպիսով, մեր կարծիքով, Սարգիսը տաղի հեղինակի անունն է։ Այս տնունը կրող տաղը ե նրան սխալմամբ միացված Թվուրանցու տաղը բացարձակ անհամաձայնության մեջ են գտնվում նաև իրենց կառուցվածքով։ Սարգսի ամրողջ տաղը, առանց բացառության, բոլոր 12 անների վերջում ունի «Ով մեծ, հողր քաջ Լիպարիտ» կրկնակի տողը։ Սրան հակառակ, Թվուրանցու տաղը ոչ մի կրկնակի տող չունի։ Նվ վերջապես, Թվուրանցու տաղն ունի իր անփոփոխ և որոշակի հանգավորումը. 27 տնանոց ոտանավորից 25-ն անխտիր իրենց ներսում ունեն անհղբ, այն ժամանակ, երբ այդ հանգը Սարգսի տաղում հանդիպում է քննադմենք մեկ անգամ։

Իերված նկատառումներով մենք գտնում ենք, որ Թվուրանցուն վերագրված տաղը Սարգսինն է և չպետք է ղետեղվեր ժողովածուում։

Նույնը կարելի է ասել նաև րմբիշների հետ զոսեմարտող կնոջ գրույցի մասին, որը ոչ մի կապ չունի «Տաղ քաջին Լիպարիտին» հետ և չի արդարացնում իր ներկայությունը ժողովածուում։ Ի դեպ, սրա քննադիրը ձեռագրից բերված է որոշ աղճատումներով և տեղ-տեղ սխալ վերծանմամբ։

Առկա է նաև քննադիր սխալ մեկնաբանում, որը մենք թերևս չնշենք, եթե այդ մեկնաբանությունը աշխատասիրողի կողմից յերված չլիներ որպես Լիպարիտի մասին գրույցի «ղաղափարական բովանդակությունը քննարկող» փաստ։ «Ինորոշ է նաև այն, —

¹¹ Նույն քառուրդադասությունում անհասկանալի է։ Տաղի բովանդակությունից ելնելով, մենք սրբադրում ենք՝ կլուվի, որով իմաստ է ստանում նախադասությունը։ Կ. Կոստանյանցը և Ն. Ակինյանը, չկասկածելով բառի աղճատված լինելու մեջ, կարծիք են հայտնել, թե «հյուսիսային հողմն»-ը տաղերգուի ծածկանունն է։ Սա թիշ հավանական է թվում։

¹² Հմմտ. Ն. Ակինյան, Սարգիս վարդապետ Կաֆայեցի, Հ. Ամս., էջ 34, 42 ևն։

¹³ Առաջիկա, էջ 511.

գրում է իմ. Գիվադյանը, որ գրույցի էրկրորդ մասում պարունակում է Ռիպարիտի յրրորդ և Մարա Բոբիչին հաղթելուց հետո, խոստացած պարգևի՝ բամբակի մեջ 40 յիտրանց քար է դնում¹⁴:

Հայ մատենագրության մեջ քար բառը բացի սովորական բարիք ունի նաև անգին քարի իմաստ. և Ռիպարիտի գրույցում խոսքը վերաբերում է անգին քարին. թագավորը, ազգիկ հղորդը իմաստով հիացած, բամբակի պարկի մեջ 40 յիտրանց անգին քար է դնում. «Են՝ ամենքն (և ոչ՝ ամենեքեան Գ. Ա.) ապույ մնացին զօծտեղակութիւն ցնայ կնոջն»¹⁵: Նույնն է տալու մեծ երկրորդ գրույցում. «Են. թագավորն և իշխանքն հասուն պարզևս մեծամեծս ազգեան»¹⁶:

Նշված բնագրերի փոխարեն կարելի էր ժողովածուն հարստացնել Քլիուրանցու իրեն ստեղծագործություններով: Մեզ համար, օրինակ, պարզ չէ, թե ինչու ուսումնասիրության բաժնում կարելի էր ողտաղործել, իսկ բնագրերի մեջ տեղ չտալ այս ոտանավորին.

...Զերթաս բնկնիս ի հետ սխոյս,
կանուշանաս հետ հարիճնուն.
Յէն քաղցրաձայն դուսանանուն
Զմիտքդ աանին հետ լկտանուն...
...Միտքդ ի վեր գայ ի հետ գինուն,
Զրերանդ լիղել տաս շներուն.
Ասես.— բարի եկիր. եղբայր.
Ի. հարգեոր՝ մարդ գիտուն...

Հարեցողներին կծու ծաղրի ենթարկող այս տաղը պահպանվել է միայն մեկ ձեռագրում, մի հանդամանք, որ ավելի պետք է մեծացնեք բնագրերը հրատարակելու անհրաժեշտությունը: Բնագրի տաղը ձեռագրում խանդավաճ է. բայց կարելի էր այն որոշ չափով վերականգնել, մնացածն էլ բերել այնպես, ինչպես որ կտա:

Պատճառ չենք գտնում անտեսելու նաև Ալիբախանսի պատմությունը, որը դարձյալ ողտակալ նյութ է տվել Գիվադյանի ուսումնասիրությանը: Ուսանողները էր հրատարակել մանավանդ ցույց տալու համար Քլիուրանցու ստեղծագործության լայն ընդգրկումը և տալիս իրենց հետաքրքրությունների բազմազանությունը: Հեղինակների ստեղծագործական կերպարը ճիշտ ներկայացնելու գործում թիչ գեր չունի նաև նյութերի ճիշտ բնորոշությունը:

Ալիբախանսի պատմությունը միջազգային գրականության նշանավոր երկերից մեկն է: Ողորդապետ դուրս գալով ասորական և հունական բնագրերից, այն թափանցել է Արևելքի մի շարք ժողովուրդների գրականությունների, ինչպես նաև գերմանա-ուսմանական և սլավոնական ժողովուրդների գրականությունների մեջ և, վարձարանական բավանդակություն ունենալով, վերածվել է ժողովրդական գրույցի, դարձել ասացողների, պոետների սեփականությունը: Ռուս գրականության մեջ Ալիբախանսի վարձարանական է որպես ինքնուրույն բիլինա և իր ազդեցությունը թողել Ալիբախանսի շնորհիվ. Բոբիսի և Դյուբի. Կոնստանտին Սուրովցով վարձարան վրա¹⁷:

Հայ գրականության մեջ պատմագրի տարածման և ժողովրդականության մասին են խոսում մի քանի տպագիր և անտիպ ժողովրդական պատմիկներ. ութ գանազան գրական խմբագրություններ, չորս հարյուր ձեռագրական բնագրականություններ և երեքուն տարբեր հրատարակություններ¹⁸:

¹⁴ Հովհ. Թյկ., էջ 63—64:

¹⁵ Նույն տեղում, էջ 273:

¹⁶ Նույն տեղում, էջ 278:

¹⁷ Զեռագրում (№ 2676, ք. 210ա)՝ պատմունկ:

¹⁸ Զեռագրում՝ հարկեր:

¹⁹ Հմմտ. История русской литературы, т. I, редакторы А. С. Орлов, В. П. Азрианова. Перегн и Н. К. Гудзний, Москва-Ленинград, Изд. АН СССР, 1941, стр. 92.

²⁰ Տես Հ. Ա. Անասյան. Հայկական մատենագիտություն. Ե. Ա. Ծրեան, 1939, էջ 106—113: Այստեղ նշված են Մ. Հայկունու հրատարակած երկու ժողովրդական պատմիկներ:

Ահա, միջնադարյան Հայաստանում այսքան լայն տարածում գտած և Արեղյանի խոսքերով ասած «չափ սիրված և կարելի է ասել, նույնիսկ ժողովրդականացած» այս «հետաքրքիր վիպական կենդանի պատմվածքը»²¹-ն է, որ Թվկուրանցին ընտրել է իր սանգոնադրոնություն Նյու թը և մշակելով դարձրել մի գրավիչ պոեմ:

Վերջում կույզները վերականգնել ներկա ժողովածուում առաջին անգամ տպագրված միակ ոտանավորի բնագրում որոշ ուղղելի է անվերծանելի մնացած տեղեր, որը կարող է ողակար լինել Թվկուրանցու տաղերի հետագա հրատարակության զեպում: Վերականգնվող տեղերը ձեռագրում եղծված են: Նրանց մասին ժողովածուում կարգում ենք. «տառերը եղծված ու անընթեռնելի են, հնարավոր չի լինում վերականգնել կամ լրացնել» (էջ 265):

Տպված է (էջ 193—194)

Պետր. Լ. ԻԿԻ

«ոգ

- 1 Հիմիկ ճարտար բժշկես դու
- 2 Որմն... քան զմա... բարակ
- 7 Երբ քան զաշխարհս ես շա...անմիտ
- 22 Քո հոգոյդ էրես փախերակ
- 20 Մարմին արայ չարեաց հերիք
- 33 . . . իտ զի յուժ ինիմ մեղաւոր

- 1 Հիմիկ ճարտար բժ[ի]:կ ես դու
- 2 Որ մնացիր քան զմազ բարակ
- 7 Երբ քան զաշխարհս ես շատ անմիտ
- 22 Քո հոգոյդ է՞ր ես փախերակ
- 20 Մարմին[դ] արայ չարեաց հերիք
- 33 [Ք]իտ զի յուժ [լ]ինի [ս] մեղաւոր

Վերականգնումները կատարել ենք ձեռագրի (ՆՁ 2676, էջ 180ա—180բ) ընձեռած տվյալների հիման վրա: Իսկ անկյունավոր փակագծերի մեջ վերցվածները մեր սեփական առաջարկներն են: Վատ չէր լինի, եթե էմ. Պիվադյանը տաղերի բնագրերը կազմելիս, երբեմն դուրս դարձնողներն անխտիր հնազանդ մնալու սկզբունքից և բնագրում, կամ էլ՝ զոնե ծանոթագրություններում, վերականգնել ազնատումները, հատկապես, երբ գրանք բացարձակ են:

Միջամառություն էր պետք նաև ուղղագրության հարցում: Բնագրերը ժողովածուում ունեն խառն ուղղագրություն (երբեմն նույնիսկ միևնույն տաղում):՝ գերբ-գերդ, ըռումբ-բռում, զազմորդի-զարդմորդի, տանուտեր-տանոտեր, բամբակ-բամպակ, աւ-Ռ և այլն:

Այսքանով բավականանանք:

Արված գիտողությունները բոլորովին չեն նվազեցնում բանասեր էմ. Պիվադյանի կատարած աշխատանքը, մանրակրկիտ ու կարևոր աշխատանքին մեր կողմից արված ըստ ամենայնի դրական գնահատականը:

Հովհաննես Թվկուրանցու տաղերի այս հրատարակությամբ հայ գրականագիտությունը հարստանում է ևս մի արժեքավոր ներդրումով:

Գ. Վ. ԱՐԳԱՄԻՆ

²¹ Անդ. Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն, Երևան, հ. Ա. էջ 107, 112: